

Իշխան Նեխիլուդովը հանգիպում է իւր քրոջը, ճերանք համարուելիս ին ժողտալով նայեցին իրարու։ Կատարուեց այն խորհրդաւոր, բառերով անարտայայտելի, բազմանշանակ փոխանակութիւնը հայեացքներին, որի մէջ ամեն ինչ ճշմարիտ էր, — ու սկսուեց բառերի փոխանակումը, որի մէջ չկար այն ճշմարտութիւնը»։

Մի այլ տեղ, Իշխան Անդրէյը սիրոյ բացատրութիւն ունի նախադասի հետ, «նա նայեց նրա (նախադասի) վրայ, և նրա դէմքի արտայայտութեան լուրջ կրքառութիւնը ապշեցրեց (Անդրէյին)։ Նրա դէմքն ասում էր, «ինչու ևս հարցնում։ Ինչու ևս կասկածում, երբ դժուար չէ իմանալ ինչու խօսել, երբ որ խօսքերով անկարելի է արտայայտել այն, ինչ որ զգում ես»։

Անն թէ ինչպէս պոլսահայ պատանին ձեռք է մեկնում համաշխարհային խոշոր գեղարդէաին «աստուածային հզօր ձիրքով», որի բանաձևով, որ ասուել է Տուրգենևեր, կիսակենք մեր խօսքը, «իմ մատաղտաի գրչակիցներ, — ասում է նա, — խօսքս ձեզ եմ ուղղում, մօտեցէք մարդկային կեանքի խօրքերին, ամեն ոք ապրում է այդ վերջնով, բայց քչերին է նա ծանօթ, և այն տեղը, ուր դուք կրօնէք, կլինի հետաքրքրական «բանեւում», «ընդգրկելում» այդ ոյժը տալիս է տաղանդը»։

Ուրեմն կեանքն ընդգրկելը տաղանդն է, իսկ նրա բանած հետաքրքրական տեղը — գեղեցիկը, այսպէս դուրս կգայ բոտ մեր բացատրութիւնների։

(շարունակելի)

Ա. Տէրտեւան



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

ՆՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1840—1911)․

շարունակութիւն

Բաւական համարելով մինչև այժմ մեր ասածը Ղ. Աղայեանի մասին որպէս կենսագրական, մնում է միզ էլի մի քանի խօսքով տալ նրա գրական գործունէութեան ընդհանուր բնոյթադիրը, որով մենք թերևս բաւարարած լինենք «Արարատ»-ի ընթերցողների դէպի Աղայեանը տածած հետաքրքրութեանը։

Որպէս գրականագէտ Աղայեանը մեղնում շատ վաղուց յայտնի է։ Դեռ 60-ական թուականների սկզբներին, երբ մեր աշխար-

հարար գրականութիւնը տակաւին իւր մանկական թոթովանքներէ շրջանն էր ապրում, Աղայեանը իւր լուծման տուել է նրան «Մեղու Հայաստանի»-ի մէջ ապագրելով իւր առաջին ոտանաւորը: Սակայն դրանից յետոյ շատ շուտով պարզւում է, որ նրա կոչումը ոչ այնքան բանաստեղծ, այն էլ քնարերգու, լինելու մէջ էր, այլ գրական մի այլ ճիւղի, որտեղ նա արտայայտւում է առաջին անգամ իւր «Արութիւն և Մանուէլ» վէպով: Այս վէպը, ինչպէս կենսագրականի մէջ արդէն յիշեցիք, առաջին անգամ կարդացւում է Պետերբուրգի հայ ուսանողական շրջանում, ուր ամենքը հիանում են սկսնակ հեղինակի ընդարայն շնորքի վրայ: Եւ այդ հիացմունքը միայն յիշեալ շրջանում չէ սպառւում, այլ մինչև այժմ էլ նա կայ և այնել յատկապէս որոշ հասակ ունեցող ընթերցողների մէջ.— դա պատանեկան հասակն է: Շատերին պատահած կլինի այդ գրքի կազմի կամ կողքի թղթի վրայ կարդալ Ա. Բ. Գ. դատարանների պատանիների կարծիքներն ու տպաւորութիւնները, որոնք նոքա արտայայտւում են գրքի ընթերցումից անմիջապէս յետոյ, և դժւար թէ բացի «Շատ լաւ գիրք է», «Ինչ հիանալի գիրք է», «Կեցցէ Արութիւնը», «Ափսոս որ կիսատ է»¹⁾ կարծիքներից ուրիշ բանի հանդիպի հետաքրքրւողը²⁾: Սակայն այդ հիացմունքը դեռ բացարձակ օրյեկտիւ չափ չէ Աղայեանի յիշեալ աշխատասիրութեան համար և առաջնորդ լինել չէ կարող գեղարուեստագէտ—քննադատի համար: Պատանեկան հոգին անշուշտ հիացմունքով կլցուի պատանի Արութիւնի և Մանուէլի միանգամայն անկեղծ ընկերսիրութեան ու փոխադարձ անձնուիրութեան բնական նկարագիրը կարդալիս, այդ հոգին անտարբեր չէ կարող մնալ Արութիւնի մօր՝ Հոռոմսիմի դէպի իւր որդին տածած սիրալիր վերաբերմունքը, գուրգուրանքն ու խանդաղատանքը արտայայտող էջերը կարդալիս, ինչպէս և չէ կարող զայրոյթով ու ատելութեամբ չլցուել, երբ այս բոլորի կողքին նա կտեսնի Արութիւնի հօր՝ Աւետիքի դէպի ընտանիքը տածած դաժան ու անգութ վերաբերմունքը: Այսպէս ուրեմն, տեսնում ենք, որ Աղայեանի առաջին վիպական աշխատութիւնը իւր մէջ շատ ունի այնպիսի էջեր, որոնցով թունդ առնել կարող է պատանեկան հոգին: Բայց արդե՞ք նոյնը կասի և իսկական գեղարուեստագէտը. դժբախտաբար պէտք է ասենք՝ ոչ: Որովհետև

1) «Արութիւն և Մանուէլ»-ը իրօք չի լրացած, եւ նոյն իսկ Աղայեանը մի տեղ խոստանում է լրացնել, բայց մինչև մահ էլ չի անում:

2) Այս տպաւորութիւնները մենք հանել ենք «Արութիւն և Մանուէլ»-ի այն օրինակների կազմերից, որոնք եղել են Գ. ձեմարանի գրադարանում:

«Արութիւն և Մանուէլ»-ը չունի գեղարուեստական երկի ամբողջութիւն. նրա մէջ չկան կատարեալ տիպեր, վէպի մէջ արտայայտած հոգեկան վիճակները չեն կազմում մի ամբողջական միութեան, որն անհրաժեշտ է գեղարուեստական երկի համար: Այս նոյն բանը հէնց ինքը Աղայեանն էլ է զգացել, համարելով իւր աշխատութիւնը «թանգարան պատկերներ»:

«Թանգարան պատկերներ» հասկացողութիւնը, հենց ինքնին պարզում է, այն հանգամանքը, թէ ինչո՞ւ «Արութիւն և Մանուէլ»-ը լիովին բաւարարելով պատանեկան հոգին, չի բաւարարում և քննադատէի պահանջները: Երկի զանազան կտորների արժէքաւոր լինելը դեռ չի պայմանաւորում ընդհանուրի արժէքաւորութիւնը, մի բան որ հմուտ քննադատի. ուրեմն և երկի օրեկափա արժէքի տեսակէտից ամենակարեւոր հանգամանքն է. և հէնց այս ընդհանրացումն անելու կարիքը չզգալով պատանու հոգին, չի էլ նկատում գրական երկի այդ կողմի թուլութիւնը, որ վերագրելի է Աղայեանի յիշեալ աշխատութեանը: Բայց յիշեալ թերութիւններին կից վէպը ունի նաև առաւելութիւններով օժտուած շատ կողմեր, որոնք միշտ էլ հետաքրքրութեամբ կարդացուել կարող են: Հայ գիւղացու ընտանիքի անդամների յարաբերութիւնը՝ մարդու և կնոջ, ծնողների և զաւակների, քրոջ և եղբոր, նոցա նիստուկացը, սովորութիւնները, իւրաքանչիւրին յատուկ մտածելակերպը, և այլն, այս բոլորը, որոնք անքան պարզ ու բնական կերպով առանց շինծու զարդարանքների տալիս է Աղայեանը, վէպի ընթերցումը միանգամայն հետաքրքիր և անձայնձրոյթ են դարձնում: Մանաւանդ որ այս աշխատութիւնը որպէս Աղայեանի կենսագրութիւն, նրա հոգու ամենաանկեղծ և նուիրական զգացմունքները շարժելով նոյն կերպէ անգրադառնում նաև ընթերցողի վրայ:

«Արութիւն և Մանուէլ»-ց զատ Աղայեանը տուել է մի շարք ուրիշ գրւածքներ էլ, որք են՝ «Երկու քոյր», «Մէրը արտաքսւած» «Բաժանութիւն¹⁾», որոնք միմիանց համեմատութեամբ առաւելութիւններ ու պակասութիւններ ունենալով հանդերձ դարձեալ գերծ չեն մնում այն ընդհանուր թոյլ կողմից, որի մասին արդէն քիչ առաջ խօսուեց. թէև կեանքի զանազան կողմերը ճշգրիտ արտայայտելու տեսակէտից, պէտք է ասած, որ սոքա բոլորն էլ բաւական յաջող են:

Սակայն եթէ Աղայեանը որպէս վիպագիր չկարողացաւ գեղարուեստի պահանջներին լիովին բաւարարել, դրա փոխարէն նա տուեց գրականութեան մի այլ ճիւղին վերաբերող երկեր, որոնք

1) Զէ աւարտած

որպէս անդուգական զոհարներ միշտ էլ կենդանի կմնան և միշտ էլ արժանի կլինին ձեռնհաս քննադատի գովասանքներին: Դա մանկական գրականութիւնն է, որի համար այնքան առատ նիւթ է մատակարարել Աղայեանը: Սակայն նախ քան Աղայեանի դուռ մանկական երկերի մասին խօսելը, կարևոր է մի քանի խօսքով յիշատակել նրա աշուղական բնաւորութեան կրող աշխատութիւնները, որոնք իրենց հերթին ևս լրացնում են մանկական գրականութիւնը:

Կենսագրականից արդէն դիտենք, որ Աղայեանի պապերից սկսած նրանց տունը շէն օջախ է եղել և յատկապէս Բոլնիսում եղած ժամանակ, երբ ինքը՝ Ղազարոսը քիչ շատ խելքի էր հասել, գրել կարդալ սովորել և իրենց տուն յաճախող աշուղներից խորապէս ազդուելով փորձեր էր անում նոյն ձևի աշուղական ոտանաւորներ յօրինելու: Աղայեանի մէջ այս գիծը իւր կատարելութեան է հասնում, և նոյն իսկ նրան մասնագէտ աշուղի դիրքին մօտեցնում, նրա Լոռիում անցկացրած թափառական կեանքը, ուր արդէն «չոլի բիւրիւլ» էր դարձել: Այս շրջանում նրա մէջ այն աստիճան է զարգանում աշուղական ոտանաւորներ գրելու փափագը, որ նա արդէն գրելով այլ ևս քաւականութիւն չստանալով դուրս է գալիս, աշուղներ փնտռում, մրցութեան մտնելու համար: Այս մրցութեանց ընթացքում հետաքրքիր է ծանօթանալ Ղազարոսին առաջնորդող գլխաւոր սկզբունքին: Այդ այն էր, որ Ղազարոս ցանկանում էր միշտ և ամենուրեք աշուղների մէջ սէր ու հետաքրքրութիւն զարթեցնել դէպի հայի անցեալը, դէպի նրա քաջ նախնիք, և նոցա գործերը լաւ ուսումնասիրելով՝ ներկայ սերնդին յորդորել նոյն շաւղով ընթանալու: Ահա այսպէս մի մրցութեան ժամանակ, երբ հակառակորդ աշուղը ծածկամիտ հարցեր է տալիս նրան Եղիայի կառքով երկինք բարձրանալու, կարմիր ծովի քանի տեղից ձեղքուելու, Յովնան մարգարէի երկու անգամ ծնուելու, անհող, անջուր բանող ժառի, հօրից ծնունդ Եւայի ևայն, մասին, Արութիւն (Աղայեան) այդ բոլորին ճշգրիտ պատասխաններ աւելցնելու, երբ հարցեր առաջարկելու հերթն իրեն է գալիս, այսպէս է դիմում հակառակորդին.

Եթէ դու գովէիր Հայոց քաջերին
Մի համբոյր կտայի սաղիդ սիմերին,
Բայց դու հաւատում ես շինծու բաներին,
Չգիտես ո՞վքեր են Արամ ու Տիգրան:

Քեզ Սուրբ Կարապետը շնորհք է տուել,
Պարզամիտ ամբօխին սուտ բաներ ասելս
Դու հայերէն անգամ չգիտես երգել

Ո՞րտեղից կիմանաս՝ ով էր Գայլ Վահան:

Ես խեղճ Քերորէն եմ սարէսար ընկած,
Սնապաշտ հօրիցս զրկուած, հալածուած,
Թէ դու էլ լինէիր ինձ չափ կարդացած
Կերգէիր անդադար Հայ ու Հայաստան...¹⁾

Եւ այս տողերը իրեն՝ Ղազարոսի հոգու հարազատ արտա-
յայտութիւններ են որն արդէն մի բոպէ իրեն մասնագէտ ա-
շուղ ընդունելով պրոպագանդ է անում յօգուտ ազգային գաղա-
փարի: Եթէ մեր աշուղական պատմութեան վրայ հնարաւոր լինէր
այստեղ մի թեթեւ ակնարկ ձգել, կտեսնէինք, որ իրօք այդպիսի
շեջան էլ գոյութիւն է ունեցել, և աշուղների պատմածներին վերո-
յիշեալ ուղղութիւնը տալու մասին շատերն են հոգացել:

Բայց Ղազարոսը շնորհիւ բարեպատեն հանգամանքների
սոսկ աշուղ չմնաց: Նա այնուհետև հնարաւորութիւն ունեցաւ
ապագայում իւր աշուղական-հեքեաթական և կէս պատմական
նիւթերը ոչ աշուղական, այլ վիպագիր-դիւցաղներիգուի հանձարով
զարգացնելու, ձոխացնելու և տալու «Անահիտ»-ներ, «Տորք
Անդեղ»-ներ, ևլն. որոնք դեռ երկար ժամանակ իրենց արժէքը
չեն կորցնելու և ծառայելու են իրենց հեղինակի համար որպէս
մի մի ոսկեծոյլ յուշարձան:

Ազգայեանի յիշեալ աշխատութիւնների միջով կարմիր թելի
նման անցնում է բարութեան, առաքինութեան և ազնւութեան
յաղթանակը: Թէև հէնց այսքանը միայն՝ բարոյագիտականը դի-
տողութեան նիւթ դարձնելով էլ բաւականանում է պ. Լէօն իւր
«Հորիզոն»-ում տպած ընդարձակ գրախօսականում, բայց մենք
անհրաժեշտ ենք համարում աւելացնելու նաև մի դիժ-կրօնա-
կան գիծը, որը իւր էութեամբ այնքան էլ հեռու չէ բարոյա-
գիտականից և շատ մօտ Ազգայեանի սրտին ու հասկացողութեանը:
Հեթանոս քուրմերի վրայ Անահիտի տարած յաղթութիւնը և նրանց
գաղտնի տանջարանը խորտակելը բարոյականի յաղթանակ լինե-
լով հանդերձ նաև քրիստոնէութեան յաղթանակն է ընդդէմ հե-
թանոսութեան: Սուրբ Մեսրոպի քարոզութեանց հետևանքը պէտք
է անհրաժեշտօրէն ժողովրդական պատմութեան քննարկում այդպիսի մի
փառաւոր յաղթանակով էլ (Ֆիլիքական իմաստով որին կից է
նաև բարոյականը) Բայց տեսնենք թէ հեղինակն ինքը ինչի մէջ
է փնտռում իւր հեքեաթի էական կողմը, «Այդ հեքեաթի էական
կողմն այն է, որ թագաւորի կեանքը արհեստն է փրկել»: Եւ իրօք,
եթէ մի ժողովուրդ աշխատասիրութեան, արհեստի, յառաջադիմու-

1) «Արութիւն եւ Մանէլ» Գ. զրբոյի 20 երես

թեան յաղթանակը այսպիսի մի սրբացրած աւանդութեամբ է անմահացնում, ինքը ժողովուրդն էլ արժան է յառաջադիմելու, դարգանալու և բախտաւորուելու»։ Ինչպէս ինքը Աղայեանն է ասում։

Պատմութեամբի տեղեկանքիս ընաւորութիւնը, որ պէտք է բարին յաղթանակէ, ժողովուրդը խաղաղ կուտուրական աշխատանքով պիտի զբաղուէ, գիր, գրականութիւն պիտի տարածել, անմիջապէս զգալի է, և հեղինակի սրտին այնքան մօտիկ է գրութեամբի այսպիսի ընաւորութիւն կրելը, որ նա չբաւականանալով իւր պատմութեամբի նիւթը այդ ուղղութեամբ դարգացնելուց, գրութեամբի վերջում մի երկու երես էլ յատկացնում է աւելի կոնկրէտ կերպով և անմիջականօրէն նոյն գաղափարները քարոզելուն, և այն էլ շատ բան իւր իսկ բերանով ասում։

Նիւթի ծագման տեսակէտից տարբերէ «Տորք Անգեղ»-ը։ Այս պօէման դրելիս Աղայեանը ոչ թէ օգտուել է ժողովրդի բերանացի պատմութիւններից, ինչպէս «Անահիտ»ն էր, այլ թորենացու մէջ պահպանուած հին գիւցազներգական մի հատուածից, որը Աղայեանի ստեղծագործող գրչի տակ մշակուելով ընդարձակուել ու ոտանաւորի ձև է ստացել։

Այս բոլորից յետոյ Աղայեանի մէջ դեռ մնում է մի խոշոր կողմ, որի յիշատակումով միայն կարող ենք նրա մասին մեր տակիքը որոշ չափով լրիւ համարել։ Աղայեանը իւր երկարամեայ գործունէութեան ընթացքում, ինչ ասպարէզում էլ որ եղել է, իւր մէջ թարմ է պահել մի յիշողութիւն. դա տիկին Սոփիայի մանկապարտէզն է, որի մասին մենք առիթ ունեցանք Արարատի նախկին №-ում խօսել։ Թէ ինչու այդ յիշողութիւնը և այդ շրջանից ստացած տպաւորութիւնները միշտ վառ մնալով Աղայեանի մէջ, նրա համար որպէս առաջնորդող փարոս են հանդիսացել, այդ մասին մենք նոյնպէս խօսեցինք։ Այժմ մեզ մնում է խօսել դոցա հետեանքի մասին. որով Աղայեանը որպէս ուսուցիչ դաստիարակ, իւր հեղինակութիւններով բարձր է կանգնած միւս բոլոր Աղայեաններից։ Դա մանուկների անբաժան բարեկամ Աղայեանն է, որոնց մտաւորն ու հոգեկանը նպատակաւ արմար կերպով դարգացնելու, ճոխացնելու հարցը այնքան մօտիկ է եղել նրա սրտին։ Ի՞նչով կարող էր Աղայեանը իւր սրտին այնքան մօտիկ խնդիրն իրադործած տեսնել, բայց եթէ հարստացնելով այն անմիջական աղբիւրը՝ մանկական գրականութիւնը, որով սնւում, կադմակերպւում է նոյա մատաղ սիրտն ու հոգին։ Եւ եթէ մենք մի ակնարկով նայենք մեր մայրենի լեզուի դասագրքերի, մանկական գրադարանների վրայ՝ կտեսնենք, որ Աղայեանի աշխատութիւններն են, որոնք թէ քանակի և թէ որակի տեսակէտից խոշոր տեղ են բռնում։ Հարկաւոր եմ համարում ընթերցողի ու-

շաղրութիւնը հրաւիրել Աղայեանի Հ. լեզուի դասագրքերի մի կողմի վրայ, որով նա ամենից շուտ և յաջող կերպով է մանկավարժական գործի նպատակայարմարութիւնը երաշխաւորում. — դասայ երկրագործի, արհեստաւորի կեանքն է, որը խորթ է կեղծ կլասիկ և ուսմանտիկ գրականութեան սգուն: Աղայեանը գիւղական կեանքի բաղմակողմանի նկարագրութեանը ոչ միայն իւր դասագրքերում է մեծ տեղ տալիս, այլ և դասագրքերից դուրս մնացած բաղմաթիւ ուսանաւորների, հեքեթների և այլ ընթերցանութեան գրքերի մէջ: Այս կարևոր խնդրի վրայ ես մանրամասնօրէն կանգ չեմ առնում, որովհետեւ նախ, որ իւր չափազանց պարզ լինելու պատճառով ամենքի համար հասկանալի է, և երկրորդ, որ այս մասին շատ է խօսուել թէ՛ պարբերական մամուլում և թէ՛ առանձին գրքերում, մանաւանդ, որ «Արարատ»-ի էջերնրն էլ իրենց սղութեան պատճառով արգելք են հանդիսանում: Կարելի էր խօսել Աղայեանի մասին որպէս հրապարակախօսի, բայց դրա համար էլ հարկաւոր է, որ որոշ ժամանակ անցնի, որպէս զի անձնական համակրանքի ու հակակրանքի խնդիրը վերանայ, որով միայն կարելի կլինի Աղայեանի հրապարակախօսական ճիշտ պատկերը հրապարակ բերել:

Այսքանով մենք վերջացնում ենք մեր ասելիքը հանգուցեալի մասին, յաւիտենական հանդիստ մաղթելով:

Վերջ

Աբէլ Աբեղայ



ՊԵՂՈՒՄՆԵՐ ՊԵՍՏՈՒՄՈՒՄ

(КАВКАЗЪ (№ 184)).

Ո՞ւմ յայտնի չեն վարդերի հին քաղաքի Պեստումի իրանց միայնութեան մէջ, հոյակապ և ահագին նշանաւոր տաճարները. պատմական աւանդութիւնները ասում են, որ այս, երբեմն յունական, ծաղկած քաղաքը մինչև հիմքը կործանուեց Նորմաններից ու Սարակինոսներից, Մինչդեռ այժմ, երբ Պեստումում սկսուել են պեղումներ, ամեն հաւանականութիւն կայ մտածելու, որ քաղաքը կարող է հանդիսանալ նոր Պոմպէա. նէապոլիտանիայի թանկարանի տեսուչ Սալիննացոլան վերջին երեք տարիները վարում է Պեստումում պեղումներ որոշ ծրագրով,